

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 17/12

Քաղ. Երևան

29 օգոստոսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն N 5.4) քննարկեց «Սեյվերգլասս» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից 2012թ. հուլիսի 25-ին ներկայացված հայտի համարը 20111382 ծավալային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ «ա» ենթակետը, 106.1-ին կետի «ա» ենթակետը, 121-րդ կետի 2-րդ ենթակետը, 122-րդ կետը, համաձայն դրանց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ծավալային նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման հիման վրա պահպանվող («Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ, Եղվարդ. Չարենցի 1, AM, N 6443) շփոթելու աստիճան նման ծավալային նշանի առկայության պատճառով, քանի որ նշանները նման են արտաքին տեսքով:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և բողոքում ներկայացրել է իր փաստարկները դրա վերաբերյալ:

Բողոքում նշված է, որ դիտարկվող ծավալային նշանների գրաֆիկական (տեսողական) տարբերությունը որոշվում է դրանց ընդհանուր ընկալման սկզբունքով, ստեղծագործական ոճային իրականացմամբ: Բողոքարկված և հակադրված ծավալային նշաններն իրենցից ներկայացնում են ապակյա շերտ, որոնք չնայած և նման ոճով են իրականացված, սակայն ունեն տարբեր արտաքին տեսք: Բողոքարկված ծավալային նշանն իրենցից ներկայացնում է շիշ, որն ունի տափակ լայն պսակով սկսվող նեղ երկար գլանաձև վզիկ, որը միանում է կաթիլի ձև ունեցող իրանին, որը շարունակելով կլոր ձևը միանում է հաստ հատակին: Շի ներքին պատերն իրենց հերթին, կորությունը պահպանելով, սահուն միանում են հարթ հատակին: Շիշն ունի օվալաձև կտրվածք,:

Հակադրված N 6443 գրանցմամբ շիշն իրենցից ներկայացնում է ավելի հաստ պսակով սկսվող հաստ և կարճ գլանաձև վզիկով ուսերից դեպի ներքև աստիճանաբար լայնացող իրանով շիշ, որը կտրուկ ավարտվում է լայն հաստ հատակով: Շի ներքին պատերն անկյան տակ միանում են խիստ արտահայտված գոգավորություն ունեցող հատակին:

Բողոքարկողը պնդում է, որ շերտի իրանների տարբեր կառուցվածքն առավել ակնհայտ է դարձնում դրանց տարբերությունը: Բողոքարկված ապրանքային նշանի շիշ իրանի կողմնային պատերը կոր գծերով միանում են շիշ ավելի փոքր տրամաչափի հիմքին շարունակելով կլոր ձևը, իսկ ներքին պատերը գոգավոր գծերով սահուն միանում են հարթ հատակին: Շնորհիվ այս կառուցվածքի շիշը, ստորին մասում կլորանալով, ստանում է կաթիլի ձև: Ի տարբերություն հայտարկվող շիշի, հակադրվածն ունի ավելի մեծ տրամաչափի հիմք, որին միանում են իրանի ավելի քիչ կորությամբ կողմնային պատերը: Շիշ լայն հիմնամասի շնորհիվ դրան միացող իրանն ավելի լայն է և ստորին մասում փռված:

Բողոքում նշված է, որ բողոքարկված և հակադրվող շերտը տարբերվում են ծավալային նշանը կազմող յուրաքանչյուր տարրով պսակով, վզիկով, իրանով, ներքին պատերով և հիմքային մասերով, այսինքն իրականացված են երկրաչափորեն տարբեր սկզբունքներով, ինչի շնորհիվ էլ դրանք ունեն բոլորովին տարբեր արտաքին տեսք և հետևապես տարբեր ընկալում:

Բողոքարկողը մեկ այլ փաստարկ էլ է ներկայացրել կապված այն հանգամանքի հետ, որ հակադրված շիշը գրանցված է միայն 33-րդ դասի, այն է ալկոհոլային խմիչքների համար, փաստում է այն մասին, որ տվյալ գրանցումը պատկանում է միայն խմիչքներ արտադրող ընկերությանը, ինչպիսին և հանդիսանում է «Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ՓԲ ընկերությունը: Եվ քանի որ խմիչքը, որպես այդպիսին, ապրանքային նշանի տեսքով ներկայացնելը հնարավոր չէ, ապա հիշյալ ընկերությունը, ինչպես խմիչքներ արտադրող բազմաթիվ այլ ընկերություններ, ներկայացրել է տվյալ ապրանքային նշանը շիշ տեսքով և գրանցել միայն 33-րդ դասի համար: Մինչդեռ հայտատու «Սեյվրգլասս» ընկերությունը մասնագիտացված է միայն շերտի արտադրության մեջ, որոնք դառնում են ոչ թե հասարակ սպառողի, այլ հիմնականում խմիչքների արտադրության մեջ

մասնագիտացված ընկերությունների ուշադրության առարկան, որոնց համար շժի դիզայնի յուրաքանչյուր տարր իր ուրույն նշանակությունն ու տարբերակիչ հատկությունն ունի: Դիտարկվող շժերն էլ իրականացված են դրանց յուրահատուկ տարբերակիչ տարրերով, որոնք աննկատ չեն կարող մնալ համապատասխան սպառողի համար: «Սեյվրգլասս» ընկերությունն այն ընկերություններից է, որի յուրօրինակ և բարձրորակ արտադրանքը հայտնի է ամբողջ աշխարհում թե՛ հայ և թե՛ օտարերկրյա արտադրողներին: Այս ընկերության շժերի ստեղծագործական և տարբերակիչ տարրերը դրանց առանձնացնում են նմանատիպ շժերի շարքից:

Բողոքարկողը գտնում է, որ «Սեյվրգլասս» ընկերության արտադրանքը նախատեսված է խմիչքների և ըմպելիքների արտադրության ոլորտում խիստ մասնագիտացված արտադրող ընկերությունների համար, որոնք միանգամից կնկատեն այդ շժերի առանձնահատկությունները և տարբերությունները, իսկ հակադրված գրանցումը, որը պաշտպանվում է միայն խմիչքների համար, նախատեսված է սպառողների ավելի լայն զանգվածի համար, ապա շփոթությունը բացառվում է:

Բողոքարկողը, ամփոփելով իր գրությունը, խնդրել է հաշվի առնել բոլոր վերոհիշյալ փաստարկները և վերանայել N 20111382 հայտով կայացրած կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել ծավալային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում միայն հայտարկված 21-րդ դասի ապրանքների նկատմամբ:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հուլիսի 25-ին «Սեյվրգլասս» ընկերության կողմից բողոք է ներկայացվել 20111382 ծավալային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին: Նշվեց, որ համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ «ա» ենթակետի, 106.1-ին կետի «ա» ենթակետի, 121-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ կետի, գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը:

Համառոտ ներկայացվեց նաև բողոքի բովանդակությունը:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի քննարկման արդյունքները այն մասին, որ ապրանքային նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են և բողոքը ենթակա է մերժման:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Սեյվերգլասս» ընկերության բողոքը և N 20111382 ծավալային ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան